№ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1898

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 9.

Ահա՛, մեր հայրիկը այսպէս է կարդում (պատկեր)։ *** Ա. Ի.։ *Կարմրաթշիկ*. Մ. Մխաքեանց։ *Գողութիւն* (Ալֆոնս Դոդէ՛ից). Զ. Տէր-Գրիգորեան։ *Անտէր զութանին* (ոտանաւոր). Միր—Կօնօ։ *Կորցրած բախտ* (Հին զրոյց). Մարտիրոս Ղահրամանեանց։ *Մարգագետնում.—Վերջին ծաղիկներ.* (պատկեր)։ *Դեղձանիկը* (ոտանաւոր). Մար. Տէր—Յակ.։ *Նապաստակները Լաբրադորում* (Ֆրանսերէնից). Առաքել Աւագեանց։ *Աշուն է* (պատկեր)։ *Սաթենիկը վանդակում.* Կ. Տէր-Յովհաննիսեան։ *Մեղուն եւ արջը* (առակ). Հայր. Բաբուրեանց։

Այլ եւ այլք

Առողջութիւն եւ երկարակեցութիւն. Թարգմ. Հ. Նիկ.։

Զուարճալիք

Հանելուկներ։

Խմբագրութեան գրասենեակից

—

Այն անձինք, որոնք մինչեւ այժմ չեն ստացել Հայրենասէր Իֆիգենիա *պրէմիան, շուտով կստանան։ Բաժանորդների անսպասելի շատութեան պատճառով, նորից պատուէր ենք տուել եւ մինչեւ տարւոյ վերջը կստանան այն բոլոր բաժանորդներն էլ, որոնք մէկ րուբլի ճանապարհածախք են վճարել։*

—Ահ՛ա, մեր հայրիկը այսպէս է կարդում։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

եւ յաւելուած դաստիարակների համար

XVI ՏԱՐԻ № 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1898 Թ.

---

* *
*

Լուսինն, ինչպէս
քնջատ կարապ ծով-
երկնքում կըլողայ,
լուսնու բակը, ինչ-

պէս փրփո՛ւր շա՜տ
թո՛յլ, թաւո՛ւկ կը-
շողայ։

Ա. Ի.

ԿԱՐՄՐԱԹՇԻԿ

Կար, չըկար իր ծնողներին հնազանդ, բարի ու սիրունիկ աղջիկ կար։ Նրա թշիկները հասած փումփուշիկ խնձորի նման կարմիր էին, դրա համար էլ բոլորը նրան «Կարմրաթշիկ» էին կանչում։

Մի անգամ Կարմրաթշիկի մայրը մի քանի զոյգ գաթայ թխեց, ձուաձեղ եփեց, մի քանի խաշած ձու էլ ածեց մի զամբիւղի մէջ ու տուեց Կարմրաթշիկին իր հիւանդ տատին տանելու մօտակայ գիւղը։ Մայրիկը նրան պատուի-

րեց չուչանալ, ճանապարհին զգոյշ կենալ, որ չըթափուեն կամ ձուերը չըկոտրուեն։

Կարմրաթշիկը վերցրեց և ճանապարհ ընկաւ։

Հովիտի մէջ, մի մարգագետնում, շատ գոյնզգոյն ծաղիկներ էին բուսել։

—Ի՞նչ սիրուն ծաղիկներ են, ասաց Կարմրաթշիկը և մօր պատուէրը մոռանալով, զամբիւղը ցած դրեց և սկսեց երգելով ծաղիկներ քաղել։

Ծաղիկներ քաղեմ,
Փնջիկ կըկապեմ,
Հիւանդ տատիկիս
Ընծայ կըտանեմ...
Ծաղիկ, ծաղիկներ,
Սիրուն ծաղիկներ։

—

Տատիս վեր կառնի,
Անուշ հոտ կանի,
Եւ ինձ օրհնելով
Ձըփ-չըփ պաչ կանի.
Քնքոյշ ծաղիկներ,
Սիրուն ծաղիկներ։

Երգում էր և քաղում Կարմրաթշիկը. այդ ժամանակ մի շատ մեծ, ահագին օձ մօտ սո-

դաց և գլուխը թմբերի տակից բարձրացնելով՝ հարցրեց.

—Կարմրաթշիկ, Կարմրաթշիկ, զամբիւղում ի՞նչ ունես։

—Ձուածեղ, գաթայ, մէկ էլ խաշած ձուեր, պատասխանեց վախեցած Կարմրաթշիկը։

—Լաւ, էդ ծաղիկները ո՞ւմ համար ես քաղում և զամբիւղի միջինը ո՞ւմ պիտի տանես։

—Տատիկիս համար եմ քաղում. էն էլ տատիկիս պիտի տանեմ, հիւանդ է։

—Լաւ, գնաս բարով, ասաց օձն ու թփերի մէջ անյայտացաւ։ Մի քիչ Կարմրաթշիկից հեռանալով, նա գլուխը վերցրեց և ահագին մարմինը զսպանակի պէս ոլորելով՝ սկսեց նետի պէս սլանալ դէպի գիւղը. հասաւ Կարմրաթշիկի տատի դուռը և սկսեց ծեծել։

—Ո՞վ ես, ներսից լսեց հիւանդի թոյլ ձայնը։

—Տատիկ, տատիկ, դուռը բաց, ես Կարմրաթշիկն եմ. ձու, ձուածեղ, գաթայ եմ բերել, մէկ էլ մի լաւ փունջ ծաղիկ, պատասխանեց չար օձը։

—Դռան վերևի թոկը քաշի՛ր, դուռը կըբացուի իսկոյն, ներս եկ։ Օձն էլ դրան էր սըպասում. քաշեց ու դուռը բաց արեց, կամացուկ սողաց հիւանդի մահճակալի մօտ և միանգամից

կուլ տւեց խեղճ հիւանդին, ինքը նրա տեղում պառկեց ու վերմակի տակից սև գլուխն ու սարսափելի աչքերն էին միայն երևում։

Կարմրաթշիկը ծաղիկներ քաղեց, իր պէս սիրունիկ մի փնջիկ կապեց և տուն հասնելով իսկոյն վազեց մահճակալի մօտ.—օձը աչքերը չռած՝ նայում էր իր համեղ զոհին։

—Ինչո՞ւ այդպէս աչքերդ մեծացել են, տատիկ, հարցրեց վախեցած Կարմրաթշիկը։

—Որպէս զի քեզ լաւ տեսնեմ, պատասխանեց օձը։

—Հապա ինչո՞ւ ճակատդ այդպէս սևացել է։

—Դեղ եմ դրել և սև շորով կապել դրա համար։

—Իսկ բերանդ ինչո՞ւ այդքան մեծացել է։

—Որպէսզի քեզ կուլ տամ, ասաց համբերութիւնը հատած օձը և պոչը փաթաթեց նրա մէջքով։

Սարսափած աղջիկը սկսեց բոլոր ուժով ճչալ. դռնից անցնող փայտահատը լսելով աղջկայ օգնութիւն աղերսող ձայնը՝ ներս ընկաւ և կացնի մի հարւածով ջնջխեց չար օձի գլուխը։ Կարմրաթշիկն ազատւեց, և երբ օձի փորը ճղեցին՝ տատիկը դեռ կենդանի էր և ոչ թէ

առաջւայ պէս հիւանդ, այլ բոլորովին առողջ։ Նա նստեց և ուտել սկսեց Կարմրաթշիկի բերածները։ Իսկ Կարմրաթշիկը ուրախ-ուրախ վազեց ու մայրիկին պատմեց գլխի անցածը...

Մ. Միսաքեանց

ԳՈՂՈՒԹԻՒՆ

—

Մանկական կեանքից մի միջնադէպ

—

(Ալֆոնս Դոդէ'ից)

—

Թէ ում դրամն էր այն—չրգիտեմ։ Երևի մայրս էր դրել այնտեղ, որ վճարի իմ երաժշտութեան դասի վարձը... Միայն մի բան հաստատ գիտէի. այստեղ էր ընկած, դահլիճի բուխարու քարի վրայ. չորեքշաթի առաւօտեան տեսայ, ուսումնարան գնալու ժամանակ։ Տեսնելուց յետոյ գլխիս մէջ ոչ մի վատ միտք չըծագեց. միայն ասացի—էհէ, քառասուն սու... Դա մի մեծ դրամ էր, դեռ ևս գեղեցիկ, թէև բաւական ծառայած էր իր կեանքում, որովհետև վրայի պատկերը մաշուել էր։ Սկզբից վերցրի՝ առանց որև է չար դիտաւորութեան,—միայն աւելի մօտիկից նայելու համար։ Վերցնելուց յետոյ իսկոյն զգացի փողի կախարդական ազդեցութիւնը ինձ վրայ։ Քառասուն սուն այն ժամանակ, տասներկու տասներեք տարեկան հասակումս, ինձ թւում էր թէ ահագին գումար է,—և յանկարծ իմ մէջ այնքան ցանկութիւններ ծնւեցին, որքան սուից էր բաղկացած այդ մեծ դրամը։ Հազիւ էի ինքս ինձ խոստովանում, որ գայթակղութեան մէջ եմ ընկել։ Մտածում էի, թէ այդ բոլոր գումարով քանի անգամ կարելի է զբօսնել նաւով։ Այն ժամանակ նաւակով զբօսնելը իմ գլխաւոր կիրքն էր։ Ճաշից յետոյ ժամանակը ամբողջովին անցկացնել հին նաւահանգստի ջրերի վրայ, ձկնորսական նաւակների, ճանապարհւող շոգենաւերի ծխի, հրամանների,

կոչերի, նաւերի տախտակամածներից և առագաստակալներից լսող երգերի, ձկնկուլների ճիչերի մէջ. Նորութիւններ լսել, հասնել պատերազմական նաւերին, որոնք մաքուր և փայլուն են, ինչպէս նոր սպայի նշանազգեստ. կամ օրօրուել քնած ու լուիկ մի մեծ նաւի ստւերում, որի վրայ արթուն է լինում միայն նիւֆաունդլենդական շունը. կամ ոտաբոբիկ վազել տախտակներով, տեսնել, թէ ինչպէս են որսում ծովային ոզնիներ, իսկ յետոյ երեկոյեան վերադառնալ տուն, յոգնած, կուպրով կեղտոտուած և տեսած ու լսածի տպաւորութիւններով լի,— այդ բոլորն ինձ թւում էր թէ մեծ բախտաւորութիւն է։ Բայց այդ բախտաւորութիւնը թանգ էր նստում։ Մի տասը սուով նաւակ վարձելու համար պէտք էր ամեն բանից հրաժարուել, խնայողութիւն անել, որովհետև շաբաթական ինձ տալիս էին միայն երկու սու։ Եւ այդպէս, այդ արծաթեայ գեղեցիկ դրամը ինձ վրայ ազդեց վերին աստիճանի գայթակղիչ կերպով։ Իսկոյն երևակայեցի—հին նաւահանգիստը, նաւերի կայմերը և, որ գլխաւորն է, ափի մօտ շարքով կանգնած փոքրիկ նաւակները, որոնք օրօրւում էին խոր ջրի ծփանքից և որոնց կարելի էր վարձել գբօսանքի համար։ Այդ բոլորն այնպէս պարզ էի երևակայում, այնպէս հրապուրւում էի, որ ստիպուած՝ էի աչքերս փակել...

Այդպէս անշաժ կանգնած էի մի քանի րոպէ, պինդ սեղմելով դրամը, որ կարծես այրում էր ձեռքս։ Այդ խռովայոյզ րոպէներին այնպէս շփոթւեցի, որ երբէք չեմ մոռանալ առաջին գայթակղութեան այդ ծանր րոպէները։ Սոսկալի կուլից ցնցուած՝ իմ փոքրիկ, խղճուկ մարմինը դողում էր։ Կարծես մի ինչ որ բան գընգգընգում էր ականջներումս։ Լսում էի սրտիս բաբախումը։ Վերջապէս, այն միտքը, թէ թագցնելով դրամը, ես վատ վարուած կըլինէի, ծնողներիս և մեր ազնիւ ընտանիքը յիշելս աւելի շուտ յաղթեցին գայթակղելուս, քան պատժի երկիւղը, որին կ'ենթարկւէի իմ յանցանքի համար։ Փողը դրի այնտեղ, որտեղից վերցրել էի։

Բայց այդ միջոցին (պէտք է բոլորը խոստովանել) բոլորովին ակամայ դրամը հրեցի դէպի ժամացոյցի տակը՝ չերևալու համար, որ ոչ ոք չըտեսնէ և փողը կորած համարեն։

Այդ րոպէից գողութիւնը կատարուած էր։ Վախկոտութիւնը և կեղծելու կարիքը աւելի ևս սաստկացնում էին իմ տանջանքները։ Իմ խիղճը ինձ գող էր անուանում—կարծես այնպէս բարձր էր ասում, որ բոլորը լսում էին։ Ուսումնարանում չէի կարողանում պարապել։ Զուր տեղը երկու ձեռքով բռնում էի գլուխս. աչքս չէի վերցնում բացած գըրքից—իմ առաջ միայն փայլփլում էր քառասուն սուանոց դրամը։

Այո, յանցանքը կատարուած էր. արդէն զղջացել էի։ Սիրտս մարում էր. զգում էի շփոթմունք, ամօթ և որ և է մի տեղ թաքնուելու պահանջ, որ ոչ ոք չըտեսնէ ինձ։ Երբեմն, կռուելով իմ խղճի հետ, ուզում էի բղաւել. «Լսիր, ես ոչ մի վատ բան չեմ արել... Հանգիստ թող ինձ... Ես հաւատացած եմ, որ քառասուն սուն կըգտնուի»։ Բայց, այդ ասելով, միևնոյն ժամանակ մի առանձին բաւականութեամբ մտածում էի, որ մեր ժամացոյցը լարւում է տաս և հինգ օրը մի անգամ և որ մեր դահլիճը մութ, սարքած, և ինչպէս մի սըրբատեղի, փակած գաւառական դահլիճը,—ներս են մտնում միայն երկու շաբթի առաւօտեան, իմ երաժշտութեան դասի ժամանակը։

Երեկոյեան, տուն վերադառնալուց յետոյ, իսկոյն մտայ դահլիճը, որ բուխարու վրայ շօշափեմ դրամը։ Դեռ այնտեղ էր։ Այնքան քաջութիւն չունէի, որ վերցնեմ. իսկ ծնողներիս ասելու համար, թէ դրամը այնտեղ է—աւելի ևս քաջութիւն էր պէտք։ Այո, ճիշտ որ ես գող էի!...

Այդ երեկոյ անսովոր կերպով յուզուած էի։ Զգում էի, որ վաղւան օրը՝ հինգշաբթին մօտենում է, հինգշաբթուայ արձակուրդը, նաւակները... Շատ էի խօսում մի առանձին տենդային յուզմունքով, բայց իմ ձայնի մէջ մի ինչ որ կեղծ նօտ

կար, որը շատ էր նեղում ինձ։ Երկու թէ երեք անգամ մօրս անհանգիստ հայեացքը կանգ առաւ ինձ վրայ և կարծես թէ հարցնում էր.—«Այս ինչ է պատահել երեխային»։ Ես էլ կարմրում էի. ինձ թւում էր թէ ամեն մի խօսքում խաբում եմ։ Այդ ժամանակ ես խոնարհ տեսք ունէի, քծնում էի, ինչպէս ամեն մի մեղաւոր երեխայ, որը ներումն է աղերսում իր համար։ Բայց ծնողներիս և իմ փոխադարձ զգւանքները աւելի էին ուժեղացնում իմ մէջ ամօթի զգացմունքը. ուզում էի ծունկ չոքել և բոլորը պատմել... Յետոյ այդ ցանկութիւնս անհետացաւ... Այդ գիշեր, սպասածիս հակառակ, շատ լաւ քնեցի։ Ահա ինչ է նշանակում՝ պատժւելու երկիւղից ազատ լինել! Այժմ համոզւեցի, որ կարող եմ անպատիժ կերպով դրամը վերցնել, որովհետև արդէն կորած էին համարում, խիղճս էլ ինձ հանգիստ թողեց։ Մնում էր միայն մտածել վաղւայ տօնի մասին։ Մինչև առաւօտ երազումս տեսնում էի հին նաւահանգիստի կայմերը, որոնք օրօրւում էին ալիքների, իսկ հեռւում—ծովը. անեզր, կապոյտ, ծփացող ծովը ժպտում էր ինձ իր հազարաւոր փոքրիկ ալեակներով։

Հետևեալ առաւօտը, նախաճաշից յետոյ, գաղտուկ ներս մտայ դահլիճը։ Բուխարու առաջ կրկին մի զարհուրելի րոպէ անցկացրի։ Կից սենեակում խօսում էին. վախենում էի, թէ յանկարծ մէկն ու մէկը ներս կըմտնէ։ Չեմ յիշում, թէ որքան ժամանակ կանգնեցի այստեղ, իմ յանցանքի շէմքում, մեկնելով ձեռ.քս դէպի դրամը կամ .յետ քաշւելով։ Չեմ մոռացել այն գունատ, մեռելային, ահից աղճատւած մանկական դէմքս, որ հայելուց նայում էր ինձ վրայ դարանամուտ եղած գազանի փայլուն աչքերով։ Վերջապէս, ձայները լռեցին։ Արագութեամբ ճանկեցի դրամը և դուրս վազեցի փողոց...

Մի հիանալի հինգշաբթի էր։ Վախենում էի, թէ ինձ յետ կըդարձնեն, և այդ պատճառով վազեցի դէպի ծովը, շտապելով վայելելու գողութեանս պտուղները։ Վազելու ժամանակ լսում էի, թէ ինչպէս արծաթեայ գեղեցիկ դրամը ու-

րախ զրնգում էր գրպանումս, դիպչելով այն երկու սուին, որ ինձ տալիս էին հինգշաբթի օրերը, և այդ երաժշտութիւնը, կարծես, թև էր տալիս ինձ։

Յանկարծ, եկեղեցու մօտով անցնելիս, կանգնեցի ձեռքը պարզած մի մուրացկանի առաջ։ Չըգիտեմ—կարեկցութիւն զգացի, տեսնելով մուրացկանին և նրա գունատ, յոգնած դէմքը, նայելով այն խղճուկ, նիհար մանկանը, որ գտնւում էր այդ թշւառի գրկին. արդեօք զիջեցի բարութիւն անելու այն պահանջին, որը միշտ տիրում է մարդուն որև է յանցանքից յետոյ, թէ անձնատուր եղայ նախապաշարմունքի։—Հարաւի բնակիչը, ողորմութիւն տալով գողացած փողից, ուզում է սրբագործել գողութիւնը։—Ինչ և է, գրպանիցս հանեցի հինգշաբթւայ իմ երկու սուն և նետեցի դէպի մուրացիկ կինը, որը այնպիսի ուրախութեամբ շնորհակալութիւն յայտնեց ինձ, որ նոյն իսկ երկու փողոց անցնելուց յետոյ զգում էի, թէ ինչպէս նա գոհ հայեացքով նայում է ինձ վրայ։

Արագութեամբ շօշափեցի և խուզարկեցի գրպաններս ու կատաղի ճիչ արձակեցի։ Մուրացկանին տւել էի քառասուն սուն! ինձ մօտ մնացել էր միայն երկու սու։ Իսկ նաւակները այնքան մօտիկ էին... Ո՛չ, դուք, հաւանական է, երբէք չէք տեսել այնպիսի կատաղութիւն, յուսահատութիւն, ինչպիսին նկատելի էր այն ժամանակ իմ դէմքի վրայ։

Կատաղած՝ յետ դարձայ։ Օ՜, ես կըգտնեմ նրան... Ես նրան կասեմ, որ սխալւել եմ, որ դրանք իմ փողերը չէին... Այդպէս մտածում էի ինքս ինձ։—Իսկ եթէ նա չըցանկայ վերադարձնել փողը, ես կըհրամայեմ բանտարկել նրան ինչպէս գողի։ (Ես դեռ համարձակւում էի գող անւանելու նրան...) Բայց ո՛ւր գնաց նա։ Զուր որոնեցի ես բոլոր եկեղեցիների գաւիթները, փողոցները։ Ո՛չ ոք չըկար! Ստանալով այդ երկու ֆրանկը, մուրացիկ կինը, ի հարկէ, գնացել էր տուն. նրա համար դա բաւական էր։ Իսկ ե՛ս... Գլուխս կորցրած, չիմանալով ինչ անել, վերադարձայ տուն, մօրս վզովն ընկայ և արտասուքն աչքերիս՝ խոստովանեցի բոլորը։

Զ. Տէր-Գրիգորեան

ԱՆՏԷՐ ԳՈՒԹԱՆԻՆ

Արար աշխարհ կանչելով «Աստուած»,
Լծեց ու հանգը քշեց գութաններ.
Վարում են նրանք հողի մէջ խրւած.
Ինչի՞ ես, գութա՛ն, դու մենակ տխրել։

—

Ամենն էլ ազատ ճեղքում են դաշտեր,
Անուշ ձայներով երգում հօրօվել.
Ամեն տեղ ուրախ ցնծում են սրտեր.
Ինչի՞ ես, գութա՛ն, դու մենակ տխրել։

—

Ինչի՞ ես գութա՛ն, անկիւնում ընկած,
Չես վարում դու էլ հարազատ հողում.
Ամոլ-ծերերի ուսերին պառկած՝
Ինչի՞ ոսկու պէս էլ չես շողշողում։

—

Ինչի՞ չեն գալիս դաշտ ու հանդաստան
Մաճկալ ու հօտաղներդ հօրօվել երգում.
Ինչի՞ չես, ինչի՞ դու, հուժկու գութա՛ն,
Մայր երկրի կուրծքը պատռելով հերկում։

Միր — Կօճօ

ԿՈՐՑՐԱԾ ԲԱԽՏ

(Հին զրոյց)

Առաջ, շատ առաջ ապրում էր մի մարդ Օհան անունով։ Նա բաւական հարստութեան տէր, չափազանց բարի ու խելացի էր։ Նա միշտ խրատում էր իր միակ որդուն՝ Սուրէնին հեռու կենալ վատ մարդկանցից, շռայլ կեանք վարելուց և առհասարակ ամեն տեսակ չար դիտաւորութիւններից։ Ընդհակառակն Օհանն միշտ ասում էր որդուն, որ պէտք է որքան կարելի է բարութիւն անել, օգնել թըշուառներին, չըշլանալ հայրական հարստութիւնով և ժամանակը չարութեամբ չըվատնել, որ վերջապէս մարդ միայն իր համար չըպէտք է մտածէ, և այլ այսպիսի խրատներ էր տալիս։ Լսում էր այդ բոլորը Սուրէնը և երեսանց ցոյց էր տալիս հօր խրատները թէ շատ լաւ տպաւորութիւն էին թողնում նրա վրայ, պնդելով որ նա շնորհիւ իր մի քանի վատ ընկերների՝ վաղուց էր ծանօթացել շռայլ կեանքին, որի մասին դեռ ոչինչ չըգիտէր ծերունի Օհանը։ Բայց Սուրէնը թէև սկսել էր հօրից ծածուկ վատ կեանք վարել, այնուամենայնիւ հօր երկիւղի և երբեմն էլ նրա ազդու խրատների շնորհիւ նա չափից չէր անցնում, և այդպիսով

ապրում էին խաղաղութեամբ։ Սակայն դժբախտաբար Օհանը երկար չապրեց։ Նա սաստիկ հիւանդացաւ և 50 տարեկան հասակում գերեզման իջաւ։ Քանի դեռ Օհանը պառկած էր, մի օր զգալով որ մահն արդէն մօտ է, կանչեց իր որդուն և ասաց.

—Որդի, ես մեռնում եմ, ամեն ինչ քեզ թողնելով. եթէ յարգանք ես զգում դէպի մեռնող հայրդ, անշուշտ կըկատարես նրա վերջին խնդիրը և ուշադրութեամբ կըլսես նրա խրատները. ես թողնում եմ՝ քեզ ահագին հարստութիւն, որպիսին շատ քչերին է բաժին ընկնում. ես կեանքումս որքան կարողացել եմ՝ օգնել եմ՝ սրան-նրան՝ թէ գործով, թէ փողով և թէ առհասարակ ամեն բանով։ Իսկ պահելով, մեծացնելով քեզ, ես յոյս եմ ունեցել, որ դու կըլինես իմ գործերի շարունակողը, ուրիշ խօսքով՝ իմ կեանքի շարունակութիւնը։ Այժմ ես մեռնելով՝ գործելու ասպարէզը քեզ եմ թողնում. աշխատիր օգտւել այդ հարստութիւնից բարի գործեր կատարելով և ուրիշներին լաւ օրինակ դառնալով։ Ոսկին յանկարծ թող չըշլացնէ քեզ ու կուրացնէ քո աչքերը. ապահով կեանքը երբեմն շատերին փչացնում է։ Դու հեռու կաց ստոր և քսու մարդկանցից, որոնք միայն ուտել գիտեն, որոնք միայն մօտիկ են մարդուն այն ժամանակ, երբ նրանից շահ ունին։ Լսիր, որդի, հօրդ վերջին խրատները և բախտաւոր կըլինես։ Ես յաւիտեան փակում եմ աչքերս, ես առանց տրտնջալու հանգիստ սրտով մեռնում եմ, միայն մխիթարւելով նրանով, որ թողնում եմ աշխարհում մի պարտաճանաչ ցաւակից։ Լսիր, Սուրէն, միշտ եղիր ազնիւ, զգոյշ և բարի ու երջանիկ կըլինես»։ Օհանը վերջացրեց խօսքերը և փչեց հոգին։

Սուրէնը փառաւոր կերպով կատարեց նրա թաղումը։ Սուրէնի մայրը վաղուց էր մեռել։ Սկզբում, հօր թաղումից յետոյ դեռ ես ոչինչ փոփոխութիւն չէր եղել նրա հետ. Նա այժմ էլ նոյն չափով էր վատնում իր ունեցածը, ինչ չափով վատնում էր կենդանութեան ժամանակ։ Նա մի քանի ամսից

յետոյ մոռացաւ իր հօր մահուան րոպէին դէպի իրան ուղղած խօսքերը և կարճ ժամանակամիջոցում վատնեց իր ամբողջ կարողութիւնը զանազան քէֆերում թուղթ խաղալով, և անառակ կեանք վարելով՝ ամենայետին թշւառութեան մէջ ընկաւ: Նրան շրջապատող ընկերները, որոնք մինչև գիտէին խղալի պատառից օգտւել, տեսնելով որ Սուրէնի մօտ ոչինչ չէր մնացել, այլ բոլորը ծծել էին, արդէն հեռացել էին նրանից և մինչև անգամ նրա հետ չէին ուզում խօսել: Յանկարծակի թշւառութեան մէջ ընկնելը և իրան ամենամտերիմ ձևացող ընկերների այդպիսի վարմունքը նրան հալ ու մաշ արին: Նա, որ մի ժամանակ սեպհական կառքերով էր պտտում, որին բոլորը պատւում և գլուխ էին տալիս, այժմ կորած էր ցրնցոտների մէջ սոված փորով և չէր իմանում ինչ անէր: Յիշեց իր հօր խօսքերը, բայց արդէն ուշ էր: Նա երկար մտածելուց ու տանջւելուց յետոյ որոշեց ընկնել աշխարհէ աշխարհ, բախտ բաժանողին գտնելու յոյսով, որպէս զի նրանից իմանայ, թէ ինչով պէտքէ վերջանայ իր կեանքը. մի խօսքով նա որոշել էր իր բախտը գտնել: Այլ ևս աւանդ տատանւելու նա շուտով ճանապարհ ընկաւ, ինքն էլ չիմանալով դէպի ուր: Շատ գնաց թէ քիչ, վերջապէս պատահեց մի առիւծի, որը չոքել էր ճանապարհի մէջ տեղում և տեղից չէր շարժւում: Տեսնելով ահռելի գազանին, նա սարսափեց և կամենում էր խոյս տալ այդ ճանապարհից, երբ նրա ականջին հասաւ առիւծի ձայնը, որ ասում էր. «Մի վախենար, ով անցորդ, առանց երկիւղ կրելու մօտեցիր ինձ, ես խօսք ունիմ քեզ ասելու»:

Սուրէնը զարմացած այն բանի վրայ, որ առիւծը խօսում է մարդկային լեզւով և այդ բանում մի երկնային հրաշք նախազգալով՝ աներկիւղ կերպով մօտեցաւ նրան և կանգնեց նրանից մի քիչ հեռու. Նա մտածում էր և ինքն իրան ասում՝ «գուցէ հէնց սա է իմ բախտը»: Մինչ նա այդպէս էր մտա-

ծում, վեհանձն կենդանին նրան խոր դիտելուց յետոյ, հարցրեց.

— Ի՞նչ մարդ ես և ո՞ւր ես գնում, ո՛վ բարի ճանապարհորդ։

— Ես դժբախտ մարդ եմ. հարստութիւն, տուն, տեղ, պատիւ կորցրած մի թշուառական եմ. ես իմ բախտն եմ փնտռում. և թէ դու՝ առիւծի կերպարանքում այն էակն ես, որ բաժանում է մարդկանց բախտը. ասա՛ ինձ, ով վեհանձ կենդանի, ի՞նչ է լինելու եմ վերջը։

—Ո՛չ, ո՛վ բարի մարդ, ես քեզ նման մի դժբախտ եմ —պատասխանեց առիւծը լսելով Սուրէնի խօսքերը. ես քո ցանկացած էակը չեմ, այլ մի տարաբախտ կենդանի, որ ընկել եմ գետնին, կպել նրան և այլ ևս չեմ կարողանում ո՛չ բարձրանալ, ո՛չ ուտել, ո՛չ խմել և ո՛չ էլ մեռնել. ամենասարսափելի որսորդներն անգամ ինձ չեն սպանում, որ միանգամից պրծնէի այս տանջանքից. ես այսպէս տանջւում եմ չիմանալով ինչո՞ւ։ Եւ, ինչպէս տեսնում եմ, դու մի բարի և արդար մարդ ես, որ բախտ ես փնտռում. եթէ երբ և իցէ քեզ կըյաջողւի գտնել նրան, հարցրո՛ւ և իմ բախտի մասին և այստեղով անցնելիս՝ յայտնիր ինձ. իսկ եթէ համաձայն չես, արի՛, ով արդար մարդ, ջախջախիր գլուխս և ազատիր ինձ այս թշուառութիւնից։ Սուրէնը համաձայնելով առաջին խընդըրքի հետ՝ թողեց առիւծին և հեռացաւ նրանից։

Բաւականին առաջ գնալով, նա պատահեց մի ընդարձակ տափարակի, որի վրայ անթիւ բանակներ էին երևում. աչքերն ուղղեց այն կողմը և տեսաւ որ մի վրանից, որ իր արտաքինով և իր շքեղութեամբ զանազանւում էր միւսներից, հեռադիտակով իրան են նայում. տեսաւ նոյնպէս, որ նոյն վրանից մի քանի մարդիկ ձի հեծան և սկսեցին ուղիղ իր վրայ քշել. Նա երկիւղից քիչ էր մնացել, որ մեռնի, կարծում էր թէ դրանք արիւնարբու աւազակներ էին և գալիս էին իրան կեանքից զրկելու։ Փախչելու հարկ չըկար. հասան ձի-

ւորները և շատ քաղաքավարի կերպով յայտնեցին, որ այդ բանակը Թագաւորի բանակ է, իսկ իրանք նրա զինւորները, թէ Թագաւորը հեռւից նկատելով օտարականին և կամենալով նրա հետ խօսել, իրանց ուղարկել է հրաւիրելու նրան։ Սուրէնն այդ խօսքերից յետոյ հանդարտւեցաւ և հանդիստ սրտով նրանց հետ դիմեց դէպի բանակ։ Մի քանի րոպէից յետոյ նա Թագաւորի առաջն էր։

Թագաւորը տեսնելով նրան՝ ողջունեց և ասաց.

—Ով ես դու, ո՛վ անցորդ, որ համարձակւել ես մեն-մենակ անցնել իմ բանակի մօտով. դու կամ մոլորւած մի մահկանացու պէտք է լինես, կամ թէ չէ երկնային մի հոգի. ով և լինիս դու՝ բարի ես երևում, ասա՛, ո՞վ ես։

—Ո՜հ, գուցէ այդ խօսքերով ինձ փորձել ես ուզում, գուցէ դու իմ բախտն ես Թագաւորի հագուստում. եթէ դու նա ես, ասա՛, ինչո՞վ պէտք է վերջանայ իմ կեանքը. ես, այո՛, ինչպէս նկատեցիր, մի մոլորւած մահկանացու եմ և իմ կորած բախտն եմ որոնում. եթէ դու իմ փնտռածն ես կամ ասա՛ ուղիղը, կամ թէ չէ վերջ դիր կեանքիս։

—Ո՛չ, ո՛վ տարաբախտ, ես քո փնտռած բախտը չեմ. ես մի դժբախտ Թագաւոր եմ, ում հետ պատերազմում եմ, միշտ յաղթւում եմ. իմ բախտը քոնից վատ է. ինչպէս տեսնում եմ, դու մի արդար մարդ ես, եթէ կըյաջողւի քեզ գտնել բախտին, հարցրու և իմ մասին, թէ ե՞րբ ես էլ մի փառաւոր յաղթութիւն կանեմ։ Մի ամբողջ երկրի թշւառ Թագաւոր, ո՛վ օտարական, այդ համեստ խնդիրն է առաջարկում քեզ, կատարիր։ Սուրէնը համաձայնւեց և բաժանւելով Թագաւորից՝ հեռացաւ նրանից։ Երկար ճանապարհ կտրելուց յոգնեց և նստեց մի քանի ծառերի տակ, որոնք իրարու մօտիկ բսնելով մի խումբ էին կազմել։ Նա քիչ նստելուց յետոյ պառկեց հանգստանալու. կէս քուն կէս արթուն՝ նա լսեց մի ձայն, իսկոյն վեր թռաւ տեղից և ոչ ոքի տեսնելով՝ նորից պառկեց. ձայնը լսւեցաւ և երրորդ անգամ. Նա նորից պառկեցաւ և

որքան զարմացաւ, երբ տեսաւ, որ իրան հետ խօսողը այն ժայռերից մէկն էր, որ ասում էր.

—Ո՞վ ես դու, ո՛վ երջանիկ մարդ, որ առանց երկիւղի այդպէս համարձակւում ես պառկելու և ելնելու, առանց մըտածելու, որ այստեղ լիքն են զանազան վայրենի կենդանիներով, որոնք ամեն մի րոպէ պատրաստ են պատառ-պատառ անելու ինչ որ կըպատահի. ասա՛ մեզ արդեօք, դու երկնային մի ոգի ես, թէ դժբախտ մի հալածական։

—Ո՛հ, դու՛ք էք այն բախտ կոչւած էակը, որին ես փնտռում եմ. մի տանջէք ինձ, ձեր կեղծիքով մի վրդովէք առանց այն էլ վրդոված հոգիս, ծառի կեղևում ինձ երևալով. դէն ձգեցէք ձեր արտաքինը և ասացէ՛ք իմ վախճանի մասին։

—Ո՛չ, ով բարի օտարական, մենք հասարակ ծառեր ենք, միայն դժբախտ և անխնամ ծառեր. գալիս է գարուն, ծաղկում, կանաչում են բոլորը, իսկ մենք միշտ մերկ ենք ու մերկ. չըգիտենք ինչո՞ւ. դու բարի մարդ ես երևում և վերջ ի վերջոյ պէտք է գտնես բախտդ. երբ նրան տեսնես, հարցրու և մեր մերկութեան մասին և վերադառնալիս մեզ մի պատասխան բեր։ Սուրէնը համաձայնեց և հեռացաւ։ Գնալով հանդիպեց մի յորդահոս գետի. նայեց գետին, դիտեց և մի ծանծաղուտ տեղ էր որոնում անցնելու, երբ նկատեց մի մեծ ձկան, որի գլուխը ջրից դուրս էր, իսկ իրանը և պոչը ջրում։ Ձուկը տեսնելով մարդուն՝ ասաց. «Ո՞վ ես դու, անհոգ ճանապարհորդ, մօտեցիր ինձ»։ Սուրէնն այստեղ ևս կաշկանդւեց. բայց առաջին փորձերից խրախուսւելով՝ քիչ առաջ գնաց և մնաց ձկան մօտ կանգնած։ Ձուկն ասաց.

—Եթէ դու ես ինձ տանջողը, ով անծանօթ օտարական, ազատիր ինձ, կամ միանգամայն սպանիր. եթէ ոչ՝ այս ի՞նչ է իմ դրութիւնը. ոչ կարողանում եմ տեղիցս շարժւել, գետն ընկնել, ոչ կարողանում եմ շունչ քաշել, և ոչ էլ մեռնում եմ, այլ այսպէս անվերջ տանջւում եմ ու տանջւում։

—Ով զժբախտ ձուկ, ես քո ցանկացածը չեմ. ես մի թշուառական եմ և իմ բախտն եմ որոնում, ասաց Սուրէնը:

—Եթէ այդպէս է, ով բարի մարդ, ասաց ձուկը, երբ գըտնես նրան, հարցրու և իմ մասին և այստեղով վերադառնալիս յայտնի՛ր ինձ, և եթէ ուզում ես գետի միւս կողմն անցկենալ, արի՛ նստիր պոչիս վրայ, ես կանցկացնեմ:

Սուրէնը նստեց և անցաւ միւս կողմը: Գետի եզերքը պատած էր խիտ անտառներով. աներկիւղ մտաւ անտառը և սկսեց առաջ գնալ: Յանկարծ անտառի խորքում նա պատահեց մի սպիտակ ձիաւորի զէնքերով պատուած. Նա դողաց, ընկաւ գետնին և ապա ուշքի գալով հարցրեց.

—Ո՞վ ես դու, անտառի հերոս. ես զգում եմ, որ դու այն պէտք է լինես, որին փնտռում եմ ես. ասա՛ ինձ, ինչով պէտք է վերջանայ այս բոլորը, իմ բախտն ո՞ւր է կորել:

—Այո՛, ես եմ քո փնտռածը, պատասխանեց ձիաւորը. դու քո բախտն ես որոնում, սակայն իզուր: Քո բախտը միշտ քեզ հետ է, հասկանո՞ւմ ես: Քո բախտը քեզ հետ է, նորից եմ կրկնում. լաւ լսիր և գնա:

—Ես լսեցի և կըգնամ, բայց արդեօք չի կարելի մի բան ևս հարցնել, ասաց Սուրէնը:

—Ի՞նչ բան:

Սուրէնը սկսեց պատմել այն բոլորի մասին, ինչ որ պատահել էր ճանապարհին մինչև այստեղ հասնելը: Ձիաւորը բոլորը լսելուց յետոյ, ասաց նրան.

—Երբ կըհասնես ձկան, կասես նրան, որ նա այն ժամանակ կազատուի, երբ իր փորից կըհանէ այն թանկագին քարը, որ ընկել է նրա փորը աւազ ուտելու ժամանակ: Ծառերին կասես, որ նրանք այն ժամանակ կըծաղկեն, երբ իրանց տակ թաղուած ոսկու կարասները կըհանեն: Թագաւորին կասես, որ նա այն ժամանակ կըյաղթի, երբ կըպսակուի, որովհետեւ նա աղջիկ է տղայի շորերում: Իսկ առիւծին կասես, որ նա կազատուի այն ժամանակ, երբ

պատառ-պատառ կանի իրան պատահած անմիտ եւ անխելք մարդուն. ահա և բոլորը, ինչ որ ցանկանում էիր. այժմ բարի ճանապարհ:

Սուրէնը շնորհակալութիւն յայտնելով՝ ուրախ զւարթ սկսեց առաջ գնալ: Նա հասնելով ձկանը, ասաց նրան այն, ինչ որ ասել էր բախտը: Ձուկը լսելով այդ բանը, սկսեց երկար մտածել. թէ երբ է նա կուլ տւել այդպիսի մի թանկագին քար, և յիշելով իրողութիւնը՝ կոչեց.

—Ով ազատարար, ո՞վ է արժանի այն գանձին, քան դու, որ գնացիր, չարչարւեցիր, գտար բախտը և ինձ համար այդ ուրախալի լուրը բերիր. արի հանիր այն թանկագին քարը, դու նրանով ապրիր, իսկ ինձ նրանից անջատելով, անջատիր և այս տանջանքից:

—Ոչ երբէք, պատասխանեց Սուրէնը. ես բոլորովին կարօտ չեմ այդ քարին. ինձ բախտս ասաց. որ ինքն ինձ հետ է, ուստի ես չեմ կարող այդ քայլն անել:

—Արի, ազնիւ բարեկամ, միևնոյն է, ես հանել եմ տալու, միայն թող նրան ուրիշը չտիրանայ, քանի որ միայն դու ես նրան արժանի:

Սուրէնը ոչ մի կերպով չըհամաձայնելով՝ հեռացաւ նրանից ու առաջ գնալով հասաւ ծառերին և նրանց ևս յայտնեց բախտի ասածը: Ծառերն ուրախացան և ասացին.

—Էհ ո՞վ կարող է տիրանալ այդ հարստութեան, բացի քեզանից, ով երջանիկ մարդ. արի փորիր, հանիր ոսկիները, պահիր քեզ համար, իսկ մեզ ազատիր:

Սուրէնը այստեղ ևս չըհամաձայնեց և առաջ գնալով հասաւ թագաւորին և ներկայանալով նրան՝ բոլորը պատմեց:

—Ով մարդ, ճիշտ է, աղջիկ եմ, ասաց նա. բախտի ասածի համաձայն պէտք է ամուսնանամ. թէև ես որոշել էի այդ քայլն չանել, բայց որովհետև իմ հայրենիքի ազատութիւնը պահանջում է ինձանից այդ, ես պէտք է կատարեմ. և որովհետև մինչև այժմ ոչ ոք չէ իմացել իմ ինչ լի-

Մարգագետնում.—Վերջին ծաղիկներ

նելս, բացի քեզանից, ուստի, ով օտարական, արի պսակւենք իրարի վրայ, դու կըլինես Թագաւոր, իսկ ես Թագուհի. մենք կապրենք երջանիկ կերպով և հասած կըլինենք մեր նպատակին:

Սուրէնը չ՚ընդունեց և Թագաւոր-աղջկայ առաջարկութիւնը ու առաջ գնալով՝ վերջապէս հասաւ առիւծին: Նախ քան առիւծի հետ բախտի մասին խօսելու, նա սկսեց պատմել իրան պատահած դէպքերին մասին, թէ ինչպէս նա զրկւեց անգին քարից, ոսկու կարասից և Թագուհի—աղջիկ կնոջից: Առիւծը հետաքրքրութեամբ լսելուց յետոյ ասաց. «Իսկ իմ մասին ի՞նչ ասաց, ով երջանիկ մարդ»:

—Կըգնաս կասես առիւծին, սկսեց Սուրէնը, որ նա միայն այն ժամանակ կազատւի, երբ պատառ-պատառ կանի իրան պատահած անմիտ և անխելք մարդուն:

—Ո՛հ. այդ անմիտն ու անխելքը դու ես, որովհետև քո կարճ խելքով զրկւեցար թէ թանկագին քարից, թէ ոսկուց և թէ Թագուհի-կին ունենալուց ու Թագաւոր դառնալուց. իսկ ես քեզ ուտելով կարող եմ ազատւել ներկայ դրութիւնից. այս ասաց չասաց՝ նա յարձակւեց Սուրէնի վրայ և մի րոպէում պատառ-պատառ արաւ նրան և այդպիսով ազատւեց իր տանջանքից:

Մարտիրոս Ղահրամանեանց

ԴԵՂՁԱՆԻԿԸ

—

Սիրուն թռչնիկը վանդակում՝
Միշտ աջ ու ձախ է թռչկոտում,
Եւ իր փոքրիկ, սուր կտուցով՝
Վանդակի շիւղը կոտրատում։
— Թռչնիկ, ի՞նչու դու անդադար
Թռչկոտում ես, չունիս դադար.
Չե՞ս տեսնում որ գիշեր-ցերեկ՝
Միշտ հոգում եմ քո տան համար։
Վանդակդ լայն ու ընդարձակ,
Երկյարկանի շատ սիրունակ,
Իսկ արտաքուստ մի գեղեցիկ
Արքունիքի է նմանակ։
Իսկ ճոխ սեղանը քո նոյնպէս՝
Շատ խորտիկներ ունի պէս պէս.
Կեր ու խմիր և միշտ երգիր,
Անուշ ձայնովդ ինձ սփոփիր։
Բայց իմ փոքրիկ դեղձանիկը
Լարեց անուշ իր ձայնիկը.
Եւ խնդրանաց փոխարէն՝
Տւեց այսպէս մի պատասխան.

—Ինչն է լայն ու ընդարձակ
Քան երկինքը ջինջ կապուտակ,
Եւ ինչ պալատ քան բնական
Երկիր գեղ ու անսահման։
Բայց երկնքում, լայն դաշտերում՝
Կանաչապատ անտառներում
Կան խորտիկներ շատ աննման,
Որոնցով ենք մենք կերակրւում։
Բա՛ց վանդակս, թող ինձ ազատ,
Թռչեմ երկիրս հարազատ,
Այնտեղ միայն ես կարող եմ
Երգել ազատ—լինել ազա՛տ…

Մար. Տէր–Յակ.

Bullfinch

ՆԱՒԱԲԵԿՆԵՐԸ ԼԱԲՐԱԴՈՐՈՒՄ *)

(Ֆրանսերէնից)



1859 թուականն էր։ Հեռու հիւսիսային սառուցեալ ջրերի վրայ կէտ որսացող մէկ նաւ էր լողում։ Յանկարծ բարձրացաւ մի կատաղի փոթորիկ. նաւը ընդհարուեց մէկ վիթխարի սառցակոյտի և չըկարողանալով դիմանալ հարուածին՝ փշրուեց. ջուրը հեղեղի պէս ամեն կողմից ներս էր լցւում և նաւի մէջ գտնուած 16 մարդիկը հազիւ միայն ժամանակ գտան իրանց ձգելու մեծ և փոքր մակոյկների մէջ. Նրանցից 11-ը տեղաւորուեցին մեծ մակոյկում, իսկ 5-ը փոքրում։ Թէ ինչ եղաւ մեծ մակոյկը՝ ոչ ոք չիմացաւ. երեկոյեան դէմ, փոքր մակոյկում գտնուողները տեսան, որ ազատուելու միջոցին բոլոր պաշարը՝ միսը, շաքարը, թէյը, գինին թողել են նաւի մէջ, իսկ այժմ մակոյկում իրանց մնացել է միայն ծովի պաքսիմատ, 5 վերմակ, մէկ փոքրիկ կաթսայ, մէկ ծովային քարտէզ և մէկ հեռադիտակ և այդ բոլորն էլ թրջուած, իսկ վերմակները գիշերները սաստիկ ցրտից սառչում էին։

Այս թշուառները եօթ շաբաթ շարունակ քաջութեամբ դէ-

*) Լաբրադորը երկիր է Հիւսիսային Ամերիկայում.

պի Հարաւ-էին Թիավարում. առանց մի որ և է սննդի, բացի այն փոքր քանակութեամբ պաքսիմատից, որ պարտաւոր էին հաւասարապէս իրանց մէջ բաժանելու։ Սակայն երկու կամ երեք անգամ նրանք կարողացան լաւ ճաշ պատրաստել. հէնց որ պատահում էին ալիքների վրայ ծփացող փայտի կըտորների, իսկոյն նրանք հաւաքում էին մեծ զգուշութեամբ, յետոյ լիջնելով առաջին պատահած ծովաժայռի վրայ, կրակ էին վառում և սառցով լի կաթսան վրան դնում. կամաց-կամաց հալւած սառոյցը դառնում էր եռացող ջուր, իսկ իրանք այդ ժամանակ պաքսիմատներից մէկը չորացնում, մանրում էին և խառնելով ջրի հետ՝ պատրաստում էին մի տաք ըմպելիք, որը և մեծ բաւականութեամբ խմելուց յետոյ ճանապարհ էին ընկում։ Յիսուն օր Թիավարելուց յետոյ, հիւանդ, ուժասպառ, ամբողջ մարմնով սառած, մեր ճանապարհորդները (նաւաբեկները) յուսահատւեցան. Նրանցից 4-ը ցած դնելով Թիակները, յայտնեցին, որ այլ ևս ոչինչ չէ կարելի անել և մնում է մի միջոց՝ փռւել մակոյկի յատակին և մեռնել։ Բայց նրանցից հինգերորդը, որ ընտանիքի հայր էր և ունէր Անգլիայում կին և որդիներ, որոնց նա շատ էր սիրում, չըկարողացաւ տանել այս. և իր ընտանիքը վերստին տեսնելու բուռն ցանկութիւնը դրդեց նրան դէպի ջերմ աղօթք, դիմել Նախախնամութեան օգնութեանը, որին երկար ժամանակ չէին դիմել իր ընկերները և մոռացել էին։ Նա աղօթում էր, և աշխատում էր նրանց սիրտ տալ, յոյս ներշնչել։

Վաթսուներորդ օրը ամենավերջին պաքսիմատը բաժանւեցաւ հինգ մասի։

«Դու տեսնում ես, Յովսէփ, որ անօգուտ բան է այն բոլորը,—ասացին չորսը,—Թող մեզ գէթ հանգիստ մեռնելու»։

Յովսէփը չըյուսահատւեցաւ. Նա համոզւած էր, որ փըրկութիւնը հեռու չէ և մի ինչ որ ներքին ձայն նրան կարծես խրախուսում և ասում էր՝ «քաջացիր և մի վհատիր»։

Փոքր ինչ հանգստանալուց, Յովսէփը համոզեց իր ընկերներին մի վերջին փորձ ևս անել, վերցնել թիակները և պայծառ, գեղեցիկ լուսնկայ գիշերով աշխատել 24 ժամ էլ…

Առաւօտեան դէմ, նա, որ չէր թիավարում և շարունակ պտտեցնում էր հեռադիտակը այս ու այն կողմ, բացականչեց մի այնպիսի ուրախալի ձայնով, կարծես թէ նաւը ազատուած լինէր սառցակոյտի հարւածից, որի մօտով անցել էին. «Ո՜ երկիր եմ տեսնում». և մի քանի րոպէից յետոյ աւելացրեց. «Ինձ թւում է, որ մարդիկ էլ եմ տեսնում». Նա հեռադիտակը տւեց Յովսէփին, որը ուրախութիւնից բարձր ձայնով աղաղակեց. «Այո, սրանք մարդիկ են»: Բայց ինչ մարդիկ էին, սրանք ուր էին եկել և ինչ երկիր էր այս: Ծովային քարտէզը այս հարցերին պատասխանում էր և որովհետև Յովսէփը բաւական հմուտ էր այդ գործին, ուստի շուտով իմացաւ, որ այդ երկիրը Լաբրադորը պէտք է լինի, իսկ մարդիկը՝ էսքիմոսները:

Այս որ լսեցին մեր անգլիացիք՝ տխրութեամբ միմեանց նայեցին, որովհետև նրանք շատ և շատ պատմութիւններ էին լսել այս վայրենիների խստասրտութեան մասին: Բազմաթիւ ձկնորսներ թափառելով բռնւել էին և անգթաբար կողոպտւել և խողխողւել նրանց ձեռքով:

Նրանցից մէկը՝ Ռոբերտը ամենևին չէր կամենում, որ ափ դուրս գան: Յովսէփը պնդում էր և ասում. «Ինձ համար, եթէ մեռնելու եմ, աւելի տանելի է էքսկիմացու սուր նիզակը, որ շուտով վերջ կըդնէ կեանքիս, քան քաղցը»:

Այսպէս խօսելով նրանք շարունակ թիավարում էին, երբ Թովմասը, որ բռնել էր հեռադիտակը՝ ասաց. «Բայց, իմ բարեկամներ, այս մարդիկը հագած չունին կաշւէ շորեր. Նայիր, Յովսէփ»: Յովսէփը իսկոյն ճանաչեց, որ նրանց շորերը կըտաւից էին: Այս հանգամանքը հարցը վճռեց. Նրանք նորից սիրտ առան և ուժգին կերպով սկսեցին թիավարել:

Շուտով մեր նաւակներից նկատեցին, որ այնտեղից նշան

ցոյց տւին, ծովափից աղաղակներ էին լսւում և ձողի ծայրին մի տեսակ պաստառ կապած՝ բարձրացաւ վերև։ Երդեօք սա լաւ նշան էր, թէ վատ։ Յովսէփը և իր ընկերները լուռ նայում էին այս բոլորին և չըգիտէին՝ ուրախանան, թէ՞ տխրեն. վերջապէս դուրս եկան ափը։

Ծովափի մօտ կային տասներկու տղամարդիկ, կանայք, փոքր մանուկներ, բոլորը գորշագոյն դէմքերով. նրանք մօտեցան մեր նաւաստիներին, հանեցին նրանց մակոյկի միջից, որովհետև ման գալ չէին կարողանում, ցրտից թշւառների ոտքերը սառել էին։ Էսքիմոսները սիրով նրանց ձեռքից բռնում, դրկում և ափն էին հանում. նրանց տաքացնելու համար կանայք մեծ կրակ էին վառել և շուտով նրանց համար բերին մի կազդուրիչ ըմպելիք։ Նաւաստիների անակընկալ ազատութիւնը նրանց անչափ ուրախացրեց և իրանց ուրախութիւնն արտայայտելու համար նրանք շրջան կազմեցին և սկսեցին պարել։ Բայց այս-պար շրջանը, Ռոբինզոնի մէջ եղած վայրենիների պար-շրջանը չէր, որ բոլորում էին իրանց թշնամիների շուրջը և պատրաստւում նրանց ուտելու, այլ սա մի ուրախ և ներդաշնակ պարերգ էր, որի անգլիերէն բառերը և եղանակը յափշտակեց մեր նաւաբեկներին. նրանք զմայլեցան և սկսեցին ո բախութեան արցունքներ թափել։ Այս երգը նրանց ծանօթ մի օրհներգութիւն թւեցաւ. նրանց մէջ նորից զարթնեց իրանց մանկութեան, սիրելի մօր և ընտանեկան քաղցր օջախի յիշողութիւնները։

Թովմասը ևս միանալով բնիկների հետ՝ սկսեց երգել այդ երգը, որ երեսուն տարի էր չէր ասել։

Սակայն բնիկները շարունակ մի նշան էին անում. նրանք ձեռքով ցոյց էին տալիս մօտակայ մի բլուր, երկու խօսք ասելով, որ կարծես նշանակում էր՝ ցած, ցածր։ Մի քանի ժամից յետոյ մի ուրախ աղաղակ բարձրացաւ և մեր նաւաստիները տեսան մի պարոնի և տիկնոջ, որոնք արագ քայլերով մօտենում էին իրանց մէկ էսքիմոսի առաջնորդու-

Աշուն է...

թեամբ։ Նրանք եկան ուղիղ նրանց մօտ և ձեռքերը սրտագին նրանց մեկնելով, սկսեցին խօսել անգլիերէն, անկասկած վատ անգլիերէնով. բայց ինչ փոյթ, քանի որ նրանք հասկանում էին միմեանց։ Նորեկները օրհնում էին նախախնամութեան, որ նրանց ազատել է նեղ վիճակից և գոհ էին, որ առիթ եղաւ օգնել դժբախտներին։ Ծովափի վրայ, մի փոքր հեռու, կար մի գիւղ, ուրտեղից մեր նաւաստիները պէտք է ըստանային բոլոր իրանց անհրաժեշտ պիտոյքները։ Հինգ նաւաստիները նորից նստեցին մակոյկը, ուր տեղաւորեցին նորեկ կինը և պարոնը. քիչ ժամանակ թիավարելուց յետոյ, մէկ հրուանդանի վրայ, ծովախորշում նրանք տեսան գիւղը, բաղկացած խրճիթներից. նրանց մէջ բարձրանում էր եւրոպական ճաշակով շինուած մի բաւականին մեծ տուն։ Այդտեղ, երեկոյեան, նաւաբեկները պառկեցին խիստ տաք և հանգիստ անկողիններում։

Վաթսուն և երկու օր շարունակ մակոյկի մէջ լինել, բաց երկնքի տակ և գիշերները սառած հագուստներով, իսկ այժմ ապահով, ապատ և տաք անկողիններում պառկած, երևակայեցէք դուք այն ուրախութիւնը, որ կզգային մեր նաւաստիները։

Յովսէփը չէր սխալւել. այս երկիրը Լաբրադորն էր և մարդիկը՝ էսքիմոսները, բայց քրիստոնեայ դարձած էսքիմոսներ։ Նախնի (ոչ քրիստոնեայ) էսքիմոսը կըվերցնէր մակոյկը և թշւառներին ծովի կատաղի ալիքների մէջ կըձգէր, իսկ այժմ քրիստոնեայ էսքիմոսը (էսքիմացի) ազատում է թշւառներին և գոհութիւն է անում Աստծուն, որ կարողացել է օգնել դժբախտներին։ Այն տունը, ուր իջևանեցին նաւաստիները, գերմանական քարոզիչների բնակարանն էր. դրանք պատկանում էին մօրաւական եկեղեցուն։ Այդ քարոզիչները մեծահոգութեամբ թողել էին իրանց գեղեցիկ երկիրները, իրանց ընկերները, իրանց ընտանիքը և եկել քրիստոնէութիւն քարոզելու Լաբրադորիայի էսքիմոսների մէջ։ Անգլիացի նաւաստիները ձմեռը և գարունը այդտեղ անցկացրին։

Մէկ նաւ, որ ամեն տարի Լոնդոնից գալիս էր քարոզիչներին այցելելու, հինգ նաւաստիներին էլ նորից յետ դարձրեց իրանց տները. վերադառնալիս նրանք հետները տարան շատ օգտակար նուրբ թելերից պատրաստուած մանուածներ. բացի դրանից քաջ ծանօթացան ամբողջ քրիստոնէական վարդապետութեան հետ: Հարկ չըկայ նկարագրել այն երջանկութիւնը, որ կըզգային նրանք, երբ ոտք դրին հայրենի շէմքի վրայ: Յովսէփը, քաջ Յովսէփը նորից գտաւ իր կնոջը և երեք որդոցը: Ես յիշում եմ նրա երիտասարդ որդոցը, որոնք ոչ քան յարգանքով և երախտագիտութեամբ էին խօսում Լաբրադորում գտնուած քարոզիչների մասին:

Առաքել Աւագեան



ՍԱԹԻՆԻԿԸ ՎԱՆԴԱԿՈՒՄ

Մանկական լեզւիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար։
Ս. Նազարեան

I

Տան մէջ դանդաղ շարժւում էր պատից կախւած ժամացոյցի ճօճանակը և իր չխկչխկոցով խանգարում տիրող լռութիւնը։

Սենեակը կահաւորւած էր եւրոպական ճաշակով, լուսամտի դիմաց դրւած տախտը՝ ծածկւած էր թանգագին գորգերով. երկու ծայրերին դրւած էին մետաքսէ թելերից գործած մինդարներ, երեք բարձ, միջին բարձի երեսը ասեղնագործած էր մի գեղարւեստական նկար՝ որ ներկայացնում էր գիշերը, և երկու սարահարթի միջով, չորս բոլոր լուսաւոր, գետակի ափին ընկած քարերից մէկի վրայ, նստած էր մի գլխակոր պատանի։ Պատանին հայեացքը ուղղած գետակի հոսանքին, անձնատուր էր եղել խորին ինքնամոռացութեան. միայն լուսինն էր, որ իր արծաթագոյն լուսով լուսաւորում էր չորս կողմը և վշտահար հայեացքով թափանցում թշւառ պատանու սրտի խորքերը…

Աջ պատի դիմաց շարւած էին երեք, կաղնի փայտից վերջին ճաշակով պատրաստւած պահարաններ, քարապակեայ փեղքերով։ Շքեղ և ոսկեզօծ կազմերով դասաւորւած էին նր-

րանց մէջ զանազան երկասիրութիւններ: Պահարանի դիմաց դրուած էր մեծ գրասեղան, որի վրայ կարգով շարուած էին կարասիք, որոնք նայողի վրայ թողնում էին հրապուրիչ տըպաւորութիւն:

Սենեակն ունէր երկու լուսամուտներ, ծածկուած թանկագին մետաքսէ թելերից գործուած և ժապաւէնով զարդարուած վարագոյրով, որոնցից մէկը կիսով չափ բաց էր ու նայում էր դէպի փողոցը:

Լուսամուտի դիմաց՝ յենարանի վրայ թիկն տուած օրօրւում էր տիկինը, առաւօտեան վերնազգեստով: Սև սաթի նըման մազերը սփռուած էին կրծքին, կապտագոյն ակնոցը դըրած քթին, որի տակից երևում էին՝ մի զոյգ սև և գրաւիչ աչքեր:

Տիկինը յափշտակուած՝ լրագրի համարը կլանում էր. մերթ ընդ մերթ նրա հայեացքը փոխւում էր դառն վշտերի,--նա զայրանում էր. բայց ահա նա կրկին շարունակեց կարդալ, այժմ նրա թշիկների վրայ երևաց ժպիտ. Նա ծիծաղեց և բերկրալից ուրախութեամբ շարունակեց կարդալ:

Սպասաւորը ներս մտաւ ձեռքին բռնած մատուցարանը, որի վրան դրուած էին կակաօ, կաթ և թխուածքներ. Նա սեղանի վրայ դնելով՝ հեռացաւ: Հոլանդական կակաօի անուշահոտ բուրմունքով լցուեց սենեակը:

Տիկինը լրագիրը մի կողմը դնելով, սկսեց նայել լուսամուտից: Նա նայում էր խորին հոգեզմայլութեամբ ձիւնով ծածկուած լեռներին. յանկարծ դուռը բացուեց ու շէմքում յայտնուեց փոքրիկ Սաթինիկը, որ մօտ 12 տարեկան աղջիկ էր, բարձր և վտիտ հասակով, թառամած այտերով:

Սաթինիկը սիրալիր հայեացքն ուղղելով մօր վրայ՝ ոչ-մայրենի լեզւով ասաց.

—Մայրիկ, ես գնում եմ Հեղիկի մօտ, նա արդէն ուսումնարանից վերադարձած կըլինի. օրիորդ Վարիան մեզ խոստացել է տանել զբօսնելու: Նա մօտեցաւ մօրը և շարունակեց.—

Մայրիկ, աւելի լաւ կլինէր եթէ օգնութիւն անէի այն օրիորդին. ահա տեսնում ես, այն թշուառ օրիորդը վերնազգեստ չունի, կարծես թէ մրսում է: Այս ասելով Սաթինիկը ցոյց տուեց փողոցով անցնող օրիորդներից մէկին, որը յիրաւի առանց վերնազգեստի էր և ցրտից դողում էր.— Մայրիկ, Հեղիկը պատմում է, որ նրանց ուսումնարանի չքաւոր աշակերտուհիներին զգեստներ են բաժանում:

Տիկինը Սաթինիկից այդ խօսքերը լսելով՝ սկսեց համբուրել նրան:

Օրիորդը կրկնեց իր առաջարկութիւնը և ստանալով մօր համաձայնութիւնը՝ ուրախացած հեռացաւ ասելով— Մայրիկ, ես մենակ կըգնամ, Աննա Կարլովնան (դաստիարակչուհին) ինձ շատ է ձանձրացնում:

Սաթինիկի հեռանալուց յետոյ, մայրը մտատանջութեան մէջ ընկաւ մտածելով, թէ չլինի աղջկան ինչ որ բան է պատահել. զանգակը տուաւ, եկաւ սպասաւորը: Նա պատուիրեց յետ կանչել օրիորդին, սակայն ծառան վերադարձաւ և յայտնեց, որ Սաթինիկն արդէն գնացել է:

II

Պետրոսեանի բնակարանի մանկանոցի լուսամուտներից մէկում նստած էին երկու փոքրիկ օրիորդներ և տաք-տաք վիճաբանում էին:

Մանկանոցը բաղկացած էր մի ընդարձակ սենեակից, մէջ տեղը դրուած էր մեծ սեղան, որի վրայ թափուած էին տետրակներ, գրքեր, գրիչներ, թանաքամաններ և այլն: Մի պահարանի մէջ դարսուած էին մանկական գեղեցիկ խաղալիկներ, պատկերազարդ գրքեր, պատերից կախուած հրապուրիչ պատկերներ և ժամացոյց:

Մանկանոցին կից գտնւում էր Պետրոսեանի դաստիարակչուհի օրիորդ Վարիա Մսերեանի ննջարանը, որ նոր էր աւարտել արտասահմանում իր գրական և մանկավարժական ուսումը:

Մեր փոքրիկ հերոսուհիները այնքան զբաղուած էին, որ չընկատեցին, թէ ինչպէս արդէն մթնել էր և սենեակում վառուած էին ճրագները, մինչև որ օրիորդ Վարիան նրանց չըսթափեցրեց, հրաւիրելով սեղանատուն՝ թէյ խմելու։ Երբ արդէն մեր փոքրիկները շարւեցին սեղանի շուրջը, օրիորդը հարցրեց.

—Ապա, Սաթինիկ, պատմիր տեսնենք, թէ ինչ ես շինում ամբողջ օրը և թէ ինչպէս են քեզ սովրեցնում քո Ֆրանսիացի դաստիարակչուհիները։

Սաթինիկը սկսեց կակազելով, բայց կամաց կամաց սիրտ առնելով, հայերէնից, ռուսերէնից, Ֆրանսերէնից մի խառնուրդ կազմելով—պատմել, որ ինքը առաւօտեան թէյից յետոյ ժամը 10-ից սովորում է դասերը, ապա ճաշից յետոյ իր դաստիարակչուհու հետ դնում են զբօսնելու և յաճախ պատահում է, որ օրիորդը իրան մենակ թողնում է նստարանի վրայ նստած։

«Գիտես, մեր Վարիան թէ միշտ մեզ հետ է լինում և թէ պատմում է հետաքրքիր զրոյցներ և հեքիաթներ. մենք շատ անգամ ուրախ զւարթ թռչկոտում ենք ձիւնի վրայ նրա հետ», ասաց փոքրիկ Հեղիկը։

—Լաւ, թողէք շարունակի, ասաց Վարիան, չէ որ ես պատւիրել եմ, որ ուրիշներին խօսալիս չըպէտք է խանգարել։

«Զբօսանքից վերադառնալուց յետոյ գալիս է Ֆրանսերէնի վարժուհին, շարունակեց Սաթինիկը. նա սովորացնում է գրել, կարդալ և խօսել. գիտէք ես ձանձրանում եմ բայցր բերան անելուց, մանաւանդ որ Աննա Կարլովնան միշտ ձեռք չէ վերցնում նոր révérences և պարեր սովորացնելուց։

Սպասաւորը ներս մտաւ և յայտնեց, որ օրիորդի յետևից են եկել, դաստիարակչուհին դրսում սպասում է։

Սաթինիկը հագնւեց, համբուրւելով սիրալիր կերպով բաժանւեց ընկերուհիներից, որոնք իրանց փոքրիկ հիւրին պատ-

ւելու համար, գնացին մինչև նախասենեակը ճանապարհ դը-ցելու:

Փօքրիկների վերադառնալուց յետոյ օր. Վարիան բացատրեց ծնողներին, որ նրա կրթութիւնը որքան վնասակար հետևանքներ կարող է ունենալ և որ նա առանց մայրենի լեզու իմանալու, չէ կարող լաւ ըմբռնել օտար լեզուներ, ինչպէս հաստատում են բոլոր յայտնի մանկավարժները: Յայտնեց իր ցաւը, թէ օրիորդը մի տարի առաջ որքան գեղեցիկ և աշխոյժ էր. իսկ այժմ բոլորովին նիհարել և դեղնել է, ինչպէս հայկական առածն ասում է՝ «միսը հալւել, մնացել է ոսկորը»: Երևի շատ է պարապում, աւելացրեց Պետրոսեանը: Ի վերջոյ օրիորդը ասաց, որ այդպիսի ծնողների կոյր հոգատարութիւնը և կրթութիւնը զաւակներին վնասել կարող է թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս և որ նրանք ապագայում պատասխանատու մայրեր չեն կարող լինել:

«Սաթինիկը ասաց որ վաղը ծնողներին կխնդրի իրան ուսումնարան մտցնեն և խոստացաւ, որ այսուհետև բացի դասարանական դասերից ուրիշ ոչինչ չէ սովորելու: Մենք երկար խօսում էինք այդ մասին», ասաց Հեղինէ:

—Լաւ երազ է, թէ իրագործւի, պատասխանեց Վարիան:

III

Դաշնամուրի ելևէջների ձայները թնդացնում էին դահլիճը. տիկինը նստած դաշնամուրի առաջ՝ նուագում էր: Չէր էլ նկատում, որ մի քանի րոպէ էր ինչ Սաթինիկը մօտը կանգնած սպասում էր: Սակայն նա տեսնելով որ մայրը զբաղւած է իր զբաղմունքով, սկսեց աղաղակ բարձրացնել:

—Ինչ ես շինում, չարաճճի:

—Մայրիկ, ասաց Սաթինիկը. ես եկայ քեզ խնդրելու, որ ինձ ուղարկէք ուսումնարան, այժմ ուզում եմ ուսումնարանում սովորել:

Տիկինը բոլորովին շփոթւեց, Սաթինիկի խօսքերը կարծես նրան քնից արթնացրին։ Նա ապշած նայում էր։

— Մայրիկ, ես սիրում եմ ուսումնարանը, շարունակեց Սաթինիկը, այնտեղ կարելի է ընկերուհիների հետ ազատ կարդալ, սովորել մայրենի լեզու, երգել։ Անցեալ օրը Վարիան մեզ շատ բաներ սովորացրեց. մենք գնացինք զբօսնելու, նա մեզ բացատրեց, թէ ինչպէս գոլորշուց գոյանում են ջրային կաթիլներ և ինչպէս է առաջանում կարկուտը, ձիւնը և այլն։ Գարնանը նա միշտ երեխաներին տանում է դաշտերը զբօսնելու և ծառուների ու կենդանիների կեանքից շատ առասպելներ և հեքիաթներ է պատմում, իսկ մեր Աննա Կարլովնան ինձ բոլորովին ձանձրացնում է։ Մայրիկ, ահա տեսնում ես, ինչպէս աղջիկները ուսումնարանից տուն են դառնում։ Ախ, որքան նրանք ուրախ և երջանիկ են։

Սաթինիկը բռնելով մօր ձեռքից՝ տարաւ դէպի լուսամուտ. «Տես, մայրիկ, ինչպէս նրանք խմբովին ցատկոտելով գնում են. ես էլ եմ ցանկանում լինել նրանց ընկերուհի. Նրանք շատ ուրախ և երջանիկ են, նման են ազատ թռչնակներին. Վարիան ասում է թէ ես նման եմ «վանդակում փակւած թռչնակին»։ Ա՜խ, մայրիկ, որքան ես ուրախ կլինէի, որ առաւօտեան վեր կենայի ու պայուսակը ձեռքիս՝ թռչկոտելով, ձիւնի վրայ վազվզելով գնայի ուսումնարան։ Մայրիկ, համաձայն ես, այսօր չեմ ընդունիլ մադամին, դրա համար էլ դասերս չեմ պատրաստել։

Սաթինիկը տեսնելով, որ մայրը չի պատասխանում, դահլիճից դուրս եկաւ։

Տիկինն ընկաւ մտատանջութեան մէջ։

IV

Սեղանի վրայ դրած ժամացոյցը այդ օրը մի առանձին խորհրդաւոր պաշտօն պէտք է կատարէր:

Սաթինիկը անդադար անց ու դարձ էր անում սենեակում ու ուշադրութեամբ նայում ժամացոյցին, սակայն կարծես ժամացոյցի սլաքը զարմանալի դանդաղկոտութեամբ մօտենում էր այն գծին՝ ուր գրած էր հինգ:

Օրիորդը բարկացած ասաց.

—Ո՜հ, այսքան երկար մի՞թէ կարելի է սպասել:

Նա նայեց լուսամուտից, սակայն այժմ նրան ոչինչ չէր գրաւում. ոչ անցորդները, ոչ բնութիւնը և ոչ մի ուրիշ հետաքրքիր իրողութիւն. Նա կրկին նայեց ժամացոյցին, սակայն նրան թւում էր թէ չէ գործում:

Այդ ժամանակ նրա աչքի առաջ ներկայանում էր Վարիայի բարի դէմքը և նրա տւած խորհուրդները, ուսումնարանը և ընկերուհիները. Նա երևակայում էր, որ ահա ինքը խաղում է ուսումնարանի բակում, աշակերտուհիների հետ միասին:

Վերջապէս ժամացոյցի ճօճանակը խփեց հինգը. դուռը բացւեց ու շէմքում յայտնւեց մաղամը, որ քաղաքավարութեամբ բարևելով՝ նստեց պարապելու:

Սաթինիկը բոլորովին շփոթւեց. Նա սկսեց կարմրել, մի բան էր ուզում խօսել, բայց կակազում էր. ձեռքերն իրար շփելով մնաց սառած, աչքերը գետին խոնարհեցրած:

Տիկինը տեսնելով, որ օրիորդը շփոթւել է, ասաց.

—Սիրելիս, ինչ է պատահել քեզ հետ, կարելի է հիւանդ ես:

—Ո՛չ, տիկին, պատասխանեց Սաթինիկը, ես այլևս չըպէտք է պարապւեմ: Մայրիկը ձեզ առանձնասենեակում ըսպասում է:

Տիկինն ինքն էլ ոչ պակաս շփոթւելով, մեքենայաբար քայլերը ուղղեց դէպի տանտիկնոջ առանձնասենեակը:

—

Եղանակը պարզ էր, երկինքը ջինջ և մաքուր, ամպի մի կտոր անգամ չէր երևում։ Օրիորդաց ուսումնարանի մեծ դահլիճում ուսուցչուհիներից մեկը դասամիջոցի զանգակը տուին. մի րոպէում աշակերտուհիները լցւեցին բակը ու ուրախ զւարթ սկսեցին խաղալ և անմեղ գառնուկների նման վազվզել։ Նրանց մէջ կարելի էր նկատել մեր Սաթինիկին, որ արևի դիմաց կանգնած՝ խօսում էր Հեղիկի հետ։

—Գիտես, Հեղիկ, ես այժմ շատ ուրախ եմ, որ վերջապէս հասայ նպատակիս. ինձ այս բոլորը շատ է ուրախացնում, ես այժմ գիտեմ երգել, տանը կարող եմ հիւրերի մօտ ազատ երգ ասել։ Ապա լսիր, թէ ես ինչպէս եմ երգում, և սկսեց երգել նախընթաց օրը սովորած Հասօ՚ի երգը.

«Անա ծագեց կարմիր արեւ,
Տաք եւ պայծառ է օրը»...

Զանգակը տուին, մեր Սաթինիկը ուրախ զւարթ՝ միւս աշակերտուհիների հետ միասին կարգով կանգնած՝ գնաց դասարան։

Կ. Տէր-Յովհաննիսեան

Բագու

ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՐՋԸ

—

(Առակ)

—

Հիանալի ամարնային օրերից մէկս էր: Մեղուն իր փեթակից դուրս էր եկել և մեն-մենակ զբօսնում էր անտառում:

Սաստիկ տխուր էր: Չըզլտեմ ոըտնեղից մի ձայն լսեց: Մեղուն ուրախանալով իր մտքում ասաց. «Ըհը՛, փառք Աստուծոյ, ընկեր էլ ճարեցի»:

Այդ ձայնի վրայ երևեցաւ արջը, որ կամաց-կամաց, բայց մեծ-մեծ քայլերով մօտեցաւ մեղւին և ծաղրական հայեացքով դարձաւ նրան.

—Հը՛ հը՛ հը՛, յիմար, ինչ ես՝ մէշի մէջ մեն-մենակ ման գալիս, չե՞ս վախենում որ այս թաթերովս քեզ տեղնուտեղը չորացնեմ, գետինը կոխեմ, որովհետև համարձակւել ես առանց իմ իրաւունքի մտնել իմ բնակավայրը:

—Խնդրում եմ պատիւս չըդիպչել, — հեզութեամբ պատասխանեց մեղուն:

—Էս անասունին է. տօ, մինչև անգամ համարձակւում ես ձայն հանել, հա՛:

—Հապա լռեմ, թէ ինչ, քեզ ինչ արի, որ դու հէնց սկզբից այդպէս սկսեցիր խօսել, ասաց մի փոքր գոռոզ հայեացք ձգելով մեծաթաթ արջի վրայ:

—Ասում եմ ձայնդ, թէ չէ... որոտաց արջը, չըկարողանալով զսպել իր բարկութիւնը, երբ տեսաւ աննշան ճիճուի համարձակութիւնը:

—Թէ չէ ի՞նչ... յանկարծ մի օյի՛ն չըգաս գլխիս մյ. և քաջ իմանալով մեր իմաստուն մեղուն, որ իրան անպայման մի վտանգ է սպառնում, ասելն ու արջի քթի ծակը մտնելը մէկ արաւ, չըթողնելով նրան մի խօսք անգամ արտասանել. նա թէև սաստիկ աղաչում էր որ դուրս գայ, բայց նա բո՞լորովին ուշադրութիւն չըդարձնելով, շարունակեց իր խայթոցով աւելի կատաղացնել և կսկծացնել մեր մեծաթաթ արջին:

—Ձեզ պէս կեղեքիչների և մարդասպանների հետ այսպէս պէտք է վարուել, որ իմանաք խեղճի պատիւը, դրութիւնը. ոտի տակ կըտաք, կենդանի մարդ չէք թողնիլ, այժմ էլ դու փորձիր, տանջուիր ու իմացիր որ վատ է, անխղճութիւն է անտէրին չարչարելը: Սա քեզ խրատ, որ դու միւս անգամ չըհամարձակուես կոպտութեամբ վարուել նրա հետ, որը ինչպէս դու, նոյնպէս Աստծու ստեղծածն է...

Այս ասելով նա դուրս թռաւ արջի քթի ծակից և թռչելով նստեց դիմացի ծառի վրայ. արջը երբ տեսաւ ախոյեանին իր դիմաց՝ ինքն իրան մի ինչ որ բան փնթփնթաց և հեռացաւ, կատաղութիւնից չ'իմանալով թէ ուր է գնում:

Հայր. Բաբուրեանց



Այլ եւ այլք

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Աշնանային մի տաք օր, իր տան շէմքի վրայ նստել էր ութսուն տարեկան մի ծերունի: Նրա գլուխն սպիտակ էր ձիւնի պէս, բայց դէմքն առողջ էր և ուրախ. Նրա աչքերի կրակը դեռ չէր հանգել, իսկ ձեռքերը, երևում էր, դեռ պիտանի էին ամեն տեսակ աշխատանքի համար: Նրա մօտ, ճանապարհի վրայ խաղում էին առողջ և կայտառ թոռներն ու թոռնորդիները:

Մէկ նորահաս երիտասարդ, որ նոր էր եկել քաղաքից, մօտեցաւ ծերունուն և հարցրեց, թէ ինչպէս է որ այդքան ծերացել է, բայց դեռ ուժեղ և առողջ է:

Ծերունին նրան ասաց. «Սկսած իմ ամենամատաղ հասակից՝ երբէք ինձ անկողնում չէ տեսել ծագող արևը: Ես քնում էի, հէնց որ գիշերը վրայ էր հասնում, որը Աստուած պարգևել է մեր հանգստութեան համար: Տեղիցս վեր կենալով՝ ես երբէք չեմ յօրանջել, երբէք չեմ ծուլացել, այլ աշխատել եմ եռանդով: Աշխատանքն ամրացնում էր մարմինս, իսկ աղօթքը՝ հոգիս: Ես միշտ ուրախ եմ եղել, որովհետև միշտ հաւատացել եմ Աստուծու օգնութեանը: Ես հաւատացել եմ Աստծուն և ձեռքերիս, իսկ նրանք ինձ չեն խաբել:

—«Բայց քեզ ո՞վ է սովորեցրել այդ բանը, հարցրեց երիտասարդը։

Ծերունին վեր կացաւ և տարաւ նրան իր պարտէզը։ Այնտեղ, հասած պտուղներով բեռնաւորուած ծառերի տակ, շարքով դրուած էին մեղուների փեթակները։

Ահա սրանք սովորեցրին ինձ խելք ու միտք,—ասաց ծերունին, ցոյց տալով ծառերն ու փեթակները։ – Ես տնկեցի, պատւաստեցի, խնամեցի ծառերին, նրանք բուսան իմ աչքերի առաջ և բերկրանքով լցրին սիրտս։ Ծառերին իմ որդիների նման սիրում էի. Նրանք ինձ սովրեցրին, թէ ինչպէս ողորմած է Աստուած, ինչպէս նա կըվարձատրէ մարդուս աշխատանքի փոխարէն։ Իսկ փոքրիկ մեղրաճանճը սովորեցրեց ինձ ջանասիրութիւն, խնայողութիւն և կարգ։ Տարիքս անցան հաճելի աշխատանքի մէջ, ուրախ. այդպէս էլ մեծացրի իմ որդիներին և թոռներին։

Թարգմ. Հ. Նիկ.

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Հ. Բաբուրեանցի.

23) Անուն ունեմ դըրդալի,
Ինձնից մարդիկ շատ են վախում,
Բաւական է, որ սոսկալի
Հրաման ղըրկեմ «այս ինչ տեղում»:
Եթէ հրամանս կատարւած
Ես տեսնում եմ, կամ թէ ոչ,
Վերջինի մասին կատաղած
Ես բռնում եմ դրանց պոչ:
    Ջարդ ու փշուր անում եմ,
    Եւ ապահով մնում եմ:
Ինձ գտնել էք ուզում—
Դիմէք հայոց թերթերին,
Թէ որքան վիշտ և յուզում
Պատճառել եմ ես շատերին—
Բոլորը յայտնի է ամենին:

Առաջ. Մ. Մ.

24) Իսկապէս ես թռչուն չեմ,
Առանց թև էլ կըթռչեմ,
Կտուց ունեմ պողպատից,
Ամենքը կըդողան ինձնից:

Ժամանակաւոր խմբագիր՝ **ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆ**
Հրատարակիչ՝ **ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ**

Типографія К. И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1–2.
Дозволено цензурою Тифлисъ, 9 октября 1898 г.

Շարունակւում է տարեկան բաժանորդագրութիւնը

Պատկերազարդ ամսագրի **ԱՂԲԻՒՐ**

Նոր բաժանորդները կստանան բոլոր լոյս տեսած №№-ը — յունուարից

Տարեկան գինը 3 ր. (արտասահման 12 ֆռ.) Ալբոմ-Ալմանախի (101 ժամանակակից և հետաքրքրական պատկերներ) հետ 4 ր.:

Հասցէն՝ Тифлисъ, ред. *Агбюръ*.

Պայմաններ բաժանորդագրութեան

I

Տարազի 6 ամսեայ բաժանորդագինը յուլիսից մինչև յունուար 99 թ. 3 ր.

II

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը յունուար 98-ից մինչև 99 յուն. 3 ր.

III

Տարազ մարտից մինչև յունուար 99 թ.
Աղբիւր յունուարից » » »
Ալբոմ-Ալմանախ
Հայրենասէր Իֆիգենիա պրեմ. } 9 ր.

Վենետիկ Հայրիկի և Ամենապատիւ Արքազան Իզմիրլեանի ճենապակու վրայ պատկերները վաճառւում են հատը 10 ր.:

—

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ճենապակու վրայ պատկերը 3 ր. ճենապակեխամով 4 ր. Վաճառւում է Յովհ. Տէր-Սարգսեանի թղթավաճառանոցում.

Լոյս տեսաւ առանձին գրքոյկով
Ս. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ
Գինն է 40 կոպ.

Կարելի է ստանալ Տարազի խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում, իսկ Բագու եղբ. Թառայեանցների գրավաճառանոցում: 10—3

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	ր.	կ.
ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ 4 գոյնով, ազգ. և այն 101 պատկեր. 2 ր. փոխ.	1	25
ՍԱՍՈՒՆԻ ԿԵԱՆՔԻՑ—Ծերենցի Երկունք IX դարու (սպառւած է) .	2	—
Դ. ԱՂԱՅԵԱՆՑ. Բանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . .	1	—
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Բանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . .	—	30
ՍՐԲՆԴ. Քնութեան երգեր և Բանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	—	50
ՍԱՖՕ.	—	50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ճենապակու վրայ պատկերը (սպառւած է) . . .	10	—
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը 6 ր. փոխ.	4	—
ՔԵՐԿՐԱՆՔ, խրօմօ-ակւարել, ՌԱՖԱՅԷԼԻ Մադօնաներ, Հրեշտակներ, ՄՈՒՐԻԼՅՈՅԻ Յիսուս և Տիրամայր, ՇԷՔՍՊԻՐԻ Ռօմէօ-Ջուլիէտ Թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն .	—	60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ մեծադիր Փօտօ-գրաւիւր պատկերը .	1	20
ՀԱՐԼԵՄԻ ԱՂՋԻԿԸ ոսկէ շղթաներում	—	50
ՄԱՅՐԻԿԻ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1	50
ՁՄԵՌ	—	20
ԱՐՏԱՇԷՍ Բ. Թագաւորի մուտքը ի Հռոմ.	—	30